ՀՀ ՊՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հակոբյան Միեր Կարենի

«ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ԳՈՐԾԱՌՄԱՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ, ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ՄՈԼԴՈՎԱՅԻ ՕՐԻՆԱԿՈՎ

ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ, միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան 2018

Ատենախոսության թեման հաստատվել է **Երևանի պետական համալսարանում**

Գիտական ղեկավար՝ քաղաքական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր **Ա. Ա. Մարգարով**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ քաղաքական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր **Տ. Տ. Քոչարյան**

քաղաքական գիտությունների թեկնածու
Հ. Յ. Թորոսյան

Առաջատար կազմակերպություն՝ **Հայ-ռուսական համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը տեղի կունենա 2018 թվականի հուլիսի 11-ին՝ ժամը 15:00-ին, ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի «Քաղաքագիտություն» 056 մասնագիտական խորհրդի նիստում:

Մասնագիտական խորհրդի հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Կ. Ուլնեցու փող. 56/6:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2018 թ. հունիսի 9-ին:

056 մասնագիտական խորհրդի գիտական
քարտուղար, հոգեբանական գիտությունների
թեկնածու, դոցենտ՝ Զ. Դ. Ասատրյան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության թեմայի արդիականությունը: ԽՍՀՄ փլուզման արդյունքում ձևավորված նորանկախ պետությունների համար արտաքին քաղաքական կողմնորոշումը եղել է պետականության կայացման կարևորագույն խնդիրներից մեկը: Հատկապես փոքր պետությունների պարագայում տարածաշրջանային հարափոփոխ զարգացումների համատեքստում շահավետ աշխարհաքաղաքական դիրքավորումը վճռական նշանակություն է ունեցել ազգային անվտանգության ապահովման, տնտեսական առաջընթացի, ժողովրդավարացման ու սոցիալական բարեփոխումների տեսանկյունից: Եվրոպական Միությունը (ԵՄ) եղել է հետխորհրդային տարածաշրջանի հիմնական արտաքին քաղաքական դերակատարներից մեկը, որը, հետաքրքրված լինելով նորանկախ պետություններում սեփական ազդեցության մեծացմամբ, կիրառել է տարաբնույթ մեխանիզմներ, այդ թվում՝ Եվրոպական հարևանության քաղաքականությունը (ԵՀՔ) և Արևելյան գործընկերությունը (ԱԼԳ):

ԱԼԳ-ի հիմնման և Հայաստանում, Վրաստանում ու Մոլդովայում դրա գործառման համեմատական վերլուծությունը կարևոր ու արդիական է այդ երկրների արտաքին քաղաքական կողմնորոշման առանձնահատկությունները վերհանելու և հետագա զարգացման հեռանկարներն ուրվագծելու տեսանկյունից: Երեք երկրները, չունենալով ինքնաբավ արտաքին քաղաքականություն վարելու համար անհրաժեշտ ռեսուրսներ, ստիպված են եղել խորը գործընկերային հարաբերություններ զարգացնել այս կամ այն տարածաշրջանային ուժ(եր)ի հետ: Եթե մինչև ԱԼԳ մեկնարկը դեռևս չէին կիրառվում ինտեգրման գործուն մեխանիզմներ, ապա դրանից հետո ԵՄ-ն հետամուտ եղավ շահառու երկրներում քաղաքական, տնտեսական, իրավական ու սոցիալական փոփոխություններ առաջ բերելու միջոցով այդ երկրների եվրոպականացմանը՝ ձգտելով դրանք ներառել իր տնտեսաքաղաքական ուղեծրում: Ասոցացման համաձայնագրերի (ԱՀ), Խորը և համապարփակ ազատ առևտրի գոտիների (ԽՀԱԱԳ) և այլ գործիքների միջոցով ԵՄ-ն վերջին տարիներին փորձել է Հայաստանի, Վրաստանի և Մոլդովայի արտաքին քաղաքականությունը կողմնորոշել դեպի ԵՄ: ԵՄ այս քաղաքականությանն ի պատասխան ՌԴ-ի գլխավորությամբ առաջ քաշվեց Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) հիմնման գաղափարը՝ տարածաշրջանային երկու հիմնական դերակատարների՝ ԵՄ-ի և ՌԴ-ի միջև ստեղծելով որոշակի նորմատիվ հակամարտություն, ինչը ԱԼԳ-ում ներառված երկրներին դրեց բարդ աշխարհաքաղաքական դրության մեջ:

Հաշվի առնելով ԱԼԳ հիմնումից հետո ԵՄ-ի հետ Հայաստանի, Վրաստանի և Մոլդովայի հարաբերությունների զարգացման դինամիկան, ներկայում կարևոր է կատարել դրանց համեմատական վերլուծություն՝ հասկանալու երեք երկրներում արտաքին քաղաքական տարամետ զարգացումների դետերմինանտները և ուսումնասիրելու դրանց արդյունքում ստեղծված իրավիճակի առանձնահատկությունները: Միայն ընդգրկուն հետազոտության միջոցով է հնարավոր համապարփակ քննարկման ենթարկել Հայաստանում, Վրաստանում և

Մոլդովայում արտաքին քաղաքական տեղաշարժերի վրա ազդող գործոնները, ԵՄ-ի հետ հարաբերությունների զարգացման քաղաքական, տնտեսական, անվտանգային ու այլ բաղադրիչները և առանձնացնելու երեք երկրների արտաքին քաղաքական հետագա զարգացման հեռանկարները:

ԱԳ-ն ներկայում թևակոխել է զարգացման նոր փուլ. Հայաստանի, Վրաստանի և Մոլդովայի հետ պայմանագրային հարաբերությունների «թարմացման» շրջանը համընկնում է նաև երեք երկրներից առնվազն երկուսում (Հայաստան և Մոլդովա) ներքաղաքական տեղաշարժերի հետ, որոնց համատեքստում կարևոր է թեմայի շուրջ գիտական ուսումնասիրությունների իրականացումը:

Հաշվի առնելով ներկա շրջանում տարածաշրջանային դերակատարների հետ սերտ համագործակցությանը և/կամ ինտեգրմանը Հայաստանի, Վրաստանի ու Մոլդովայի արտաքին քաղաքական օրակարգում տրվող կարևորության աստիճանը, ինչպես նաև թե՛ ԵՄ-ի, թե՛ Ռուսաստանի հետաքրքրվածությունը տարածաշրջանում սեփական դերի ու ազդեցության բարձրացմամբ՝ կարելի է պնդել, որ սույն աշխատանքում ուսումնասիրվող թեման խիստ արդիական է և ունի ինչպես գիտական, այնպես էլ գործնական կարևոր նշանակություն:

Հիմնախնդրի գիտական մշակվածության աստիճանը: ԵՄ հարևանության քաղաքականության տեսական վերլուծությանն ու հայեցակարգայնացմանը, ԱԳ հիմնմանն ու գործառման վրա ազդող գործոններին, տարբեր համատեքստերում ԵՄ-ի հետ հարաբերությունների զարգացմանը տարբեր ժամանակներում անդրադարձել են տարբեր հեղինակներ:

Հարևան տարածաշրջաններում ԵՄ-ի եվրոպականացման քաղաքականությունն ու փոխպայմանավորումը՝ որպես դրա հիմնական գործիք, գերազանցապես քննարկվում են արևմտյան հեղինակների կողմից: Ընդ որում, քանի որ ԵՄ հարևանության քաղաքականությունն ու եվրոպականացումն ինքնին համեմատաբար նոր երևույթներ են, խնդրի շուրջ առկա գիտական աշխատությունները ևս պատկանում են ժամանակակից շրջանին: Խնդրի վերաբերյալ հատկապես նշանակալի են Ս. Անդերսենի և Կ. Էլիասենի[1], Կ. Ռադաելլիի[2], Ջ. Օլսենի[3], Ս. Լավենեքսի[4], Ֆ. Շիմմելֆենիգի[5] և Ու. Սեդելմայերի[6], Ռ. Յանգսի[7], Ռ. Ուոնգի[8] և այլոց հրապարակումները: Նշված հեղինակները եվրոպականացումը հիմնակա-

---

[1] **Andersen S.S., Eliassen K.A. (eds.),** *Making Policy in Europe. The Europeification of National Policy-making,* London, Thousand Oaks, New Delhi: SAGE Publications, 1993.

[2] **Radaelli C.M.,** *Europeanisation: Solution or problem?,* European Integration online Papers (EIoP), 2000, Vol. 8, No. 16, http://www.eiop.or.at/eiop/pdf/2004-016.pdf, մատչելի էր 15.04.2018.

[3] **Olsen J.P.,** *The Many Faces of Europeanization,* Journal of Common Market Studies, 2002, Vol. 40, No. 5, pp. 921-952.

[4] **Lavenex S.,** *EU external governance in "wider Europe",* Journal of European Public Policy, 2004, Vol. 11, No. 4, pp. 680-700.

[5] **Schimmelfennig F.,** *The International Promotion of Political Norms in Eastern Europe: A Qualitative Comparative Analysis,* Jean Monnet/Robert Schuman Paper Series, 2005, Vol. 5, No. 28.

[6] **Schimmelfennig F., Sedelmeier U.,** *Governance by conditionality: EU rule transfer to the candidate countries of Central and Eastern Europe,* Journal of European Public Policy, 2004, Vol. 11, No. 4, pp. 661-679.

[7] **Youngs R.,** *Democracy promotion as external governance?,* Journal of European Public Policy, 2009, Vol. 16, No. 6, pp. 895-915.

[8] **Wong R.,** Europeanization of Foreign Policy. In Hill C. and Smith M. (eds.), *International Relations and the European Union*, 2nd ed., Oxford: Oxford University Press, 2011, pp. 149-170.

նում դիտարկում են որպես ԵՄ ներսում կառավարման որոշակի սկզբունքների, նորմերի ու արժեքների ամրագրում, այնուհետև՝ դրանց «արտահանում» դեպի երրորդ երկրներ, որի միջոցով ԵՄ-ն կարողանում է ընդլայնել իր արտաքին կառավարման սահմանները և լուծել աշխարհաքաղաքական գերակայության խնդիրը: Այնուամենայնիվ, մասնագիտական գրականությունում առկա չէ անվերապահ դրական կամ բացասական մոտեցում եվրոպականացման՝ որպես քաղաքական համակարգի փոխակերպման գործիքի վերաբերյալ:

ԵՄ արտաքին քաղաքականությունում ԵՀՔ-ի և ԱլԳ-ի տեղին և դրա աշխարհաքաղաքական նշանակությանն անդրադարձել են Կ. Սմիթը[9], Մ. Էմերսոնը և Գ. Նութչևան[10], Բրեթերթոնը և Վոգլերը[11] և այլք: Նշված աշխատություններում ԵՀՔ-ն և ԱլԳ-ն դիտարկվում են որպես ԵՄ-ի կողմից սեփական շահերի առաջմղման միջոց: Ընդ որում, մասնագիտական գրականությունում ընդունված է այն մոտեցումը, որ ԱլԳ-ի շրջանակներում ԵՄ-ն չափազանց ընդգրկուն պահանջներ է ներկայացնում շահառու երկրներին՝ փոխարենն առաջարկելով փոքր «վարձատրություն», ինչը նվազեցնում է ծրագրի գրավչությունը: Խոսքը մասնավորապես ԱլԳ-ին մասնակցող երկրների համար ԵՄ-ին անդամակցութան հեռանկարի բացակայության մասին է:

Մասնագիտական գրականությունում լայնորեն տարածված է նաև ԱլԳ իրականացման քննարկումը թե՛ ԵՄ-ի, թե՛ առանձին երկրների անվտանգային շահերի ապահովման համատեքստում: Անմիջականորեն չառնվելով ատենախոսության որոշ խնդիրների՝ այնուամենայնիվ, պրոֆեսոր Հ. Քոթանջյանի բազմաթիվ աշխատություններ[12] կարևոր ներդրում ունեն անվտանգության լույսի Հայաստանի արտաքին քաղաքական գործընթացների քննարկման մեջ: Այս համատեքստում կարելի է առանձնացնել նաև Վ. Հունանյանի[13], Հ. Թորոսյանի[14], Գ. Նոդիայի[15], Դ. Հելլիի[16], Գ. Սասսեի[17], Ն. Պոպեսկուի[18] և այլոց աշխա-

---

[9] **Smith K.,** *European Union foreign policy in a Changing World*, Cambridge: Polity Press, 2003.

[10] **Emerson M., Noutcheva G.,** *Europeanisation as a Gravity Model of Democratisation,* Herald of Europe, 2005, No. 2.

[11] **Bretherton C., Vogler J.,** *The European Union as a Global Actor*, 2nd ed., London: Routledge, 2006.

[12] **Քոթանջյան Հ.Ս.,** *Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարության մշակման ուղեցույցները փարածաշրջանային անվտանգության ճարտարապետության համատեքստում,* Երևան, ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ԱՌՀԻ, 2008: // **Քոթանջյան Հ.Ս.,** *Հակամարտության էթնոքաղաքագիտություն: Հայաստանի ռազմական քաղաքականության և ազգային անվտանգության հիմունքները,* Երևան, ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ԱՌՀԻ, 2010: // **Քոթանջյան Հ.,** *Հայաստանի Հանրապետության ազգային շահերի ապահովման հեռանկարները համընդհանուր անվտանգության համակարգի արդիականացման համատեքստում,* ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ԱՌՀԻ «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2009, № 4 (62), էջ 27-45:

[13] **Հունանյան Վ.,** *Հակամարտությունների կարգավորման ԵՄ մոդելի անարդյունավետությունը ղարաբաղյան հիմնախնդրի դեպքում,* 21-րդ դար, 2013, № 4 (50), էջ 154-175:

[14] **Թորոսյան Հ.,** *Անվտանգության ոլորտում ՀՀ-ԵՄ հարաբերությունների խորացման հնարավորության մասին,* 21-րդ դար, 2016, № 4 (68), էջ 90-99:

[15] **Nodia G.,** *Europeanization and (not) resolving secessionist conflicts,* Journal of Ethnopolitics and Minority Issues in Europe, 2004, No. 1.

[16] **Helly D.,** *EU's Influence in Its Eastern Neighbourhood: The Case of Crisis Management in the Southern Caucasus,* European Political Economy Review, 2007, No. 7, pp. 102-117.

[17] **Sasse G.,** *The European Neighbourhood Policy and Conflict Management: A Comparison of Moldova and the Caucasus,* Ethnopolitics, 2009, Vol. 8, No. 3-4, pp. 369-386.

[18] **Popescu N.,** *EU Foreign Policy and Post-Soviet Conflicts: Stealth Intervention*, Abingdon: Routledge, 2011.

տությունները: Խնդրի շուրջ առկա է այն գերակա դիրքորոշումը, որ ԵՄ-ն իր ունեցած ռեսուրսներով ի զորու չէ էական դեր ունենալ Հայաստանում, Վրաստանում և Մոլդովայում առկա հակամարտությունների կարգավորմանը, ուստի անվտանգության բաղադրիչով ԵՄ-ի ներգրավվածությունը ոչ միայն չի նպաստում ԱլԳ հեղինակության բարձրացմանը, այլև նեղացնում է ԵՄ-ի դերը շահառու երկրների արտաքին քաղաքականությունում:

ԱլԳ-ի գործառման շուրջ մասնագիտական քննարկումներում մշտապես կարևոր տեղ է հատկացվել ԵՄ-ՌԴ հարաբերություններին և ԱլԳ-ի նկատմամբ Ռուսաստանի ունեցած դիրքորոշումներին: Առկա գրականությունում դժվար է գտնել միանշանակ պնդումներ ԱլԳ-ի իրականացման վրա Ռուսաստանի ազդեցության վերաբերյալ: Որոշ հեղինակներ[19] պնդում են, որ Ռուսաստանը ապակառուցողական դերակատարում ունի և նպաստում է ԱլԳ-ի հեղինակազրկմանը, մինչդեռ այլք[20] Ռուսաստանին համարում են տարածաշրջանում ԵՄ-ին նորմատիվ հակակշիռ, որը ևս ձգտում է փոքր պետություններին իր ուղեծրում տեղավորելու միջոցով իրականացնել սեփական արտաքին քաղաքական շահերը:

Հայաստանում, Վրաստանում և Մոլդովայում ԱլԳ-ի գործառումն ու դրա առանձնահատկությունները լայնորեն քննարկվում են թե՛ տեղական, թե՛ արտասահմանյան հեղինակների կողմից: Հայաստանում ԱլԳ գործառման ուսումնասիրման հարցում առավել նշանակալի են Կ. Բեքարյանի[21], Ռ. Գիրագոսյանի[22], Ս. Մինասյանի[23], Ա. Թերզյանի[24], Ն. Գևորգյանի[25], Վ. Տեր-Մաթևոսյանի[26], ինչպես նաև Լ. Սիմոյի[27] հրապարակումները: Հատկապես Գիրագոսյանի, Թերզյանի, Տեր-Մաթևոսյանի աշխատանքներում առանձնակի ուշադրություն է դարձվում Հայաստանի արտաքին քաղաքական «շրջադարձին» ու դրա պատճառներին,

---

[19] **Delcour L., Kostanyan H., Vandecasteele B., Van Elsuwege P.,** *The Implications of Eurasian Integration for the EU's Relations with the Countries in the post-Soviet space,* Studia Diplomatica, 2015, Vol. 68, No. 1. // **Delcour L., Wolczuk K.,** *Spoiler or facilitator of democratization?: Russia's role in Georgia and Ukraine,* Democratization, 2015, Vol. 22, No. 3, pp. 459-478. // **Kakachia K., Kakhishvili L., Larsen J., Grigalashvili M.,** *Mitigating Russia's Borderization of Georgia: a Strategy to Contain and Engage,* GIP Policy Paper, December 2017.

[20] **Trenin D.**, *Russia and the New Eastern Europe,* Russian Politics and Law, 2011, Vol. 49, No. 6, pp. 38-53. // **Dragneva R., Wolczuk K.,** *Russia, the Eurasian Customs Union and the EU: Cooperation, Stagnation or Rivalry?,* Chatham House briefing paper, REP BP 2012/01, August 2012. // **Samokhvalov V.,** *Russia, the Near Abroad and the West: Lessons from the Moldova-Transdniestria Conflict,* Europe-Asia Studies, 2014, Vol. 66, No. 6, pp. 369-386.

[21] **Բեքարյան Կ.,** *Հայաստանի եվրաինտեգրման գործընթացը. հնարավորություններ և մարտահրավերներ,* Տարածաշրջանային խնդիրներ, 2013, № 2, էջ 20-24:

[22] **Giragosian R.,** *Armenia's Strategic U-Turn,* ECFR Policy Memo, April 2014.

[23] **Minasyan S.,** *Armenia Keeps on Balancing Between the European Union and the Eurasian Economic Union,* PONARS Eurasia Policy Memo No. 377, August 2015.

[24] **Terzyan A.,** *The evolution of the European Union's conception in the foreign policy discourse of Armenia: implications for U-turn and the path beyond the Association Agreement,* Eastern Journal of European Studies, 2016, Vol. 7, No. 2, pp. 165-184.

[25] **Gevorgyan N.,** *Divergent Character of the South Caucasian States' Interests vis-à-vis the European Union: Implications for the EU before Riga Summit,* Herald of Russian-Armenian (Slavonic) University: Human and Social Sciences, 2015, Vol. 61, № 1 (19), pp. 26-37.

[26] **Ter-Matevosyan V., Drnoian A., Mkrtchyan N., Yepremyan T.,** *Armenia in the Eurasian Economic Union: reasons for joining and its consequences,* Eurasian Geography and Economics, 2017, Vol. 58, No. 3, pp. 340-360.

[27] **Simão L.,** *The problematic role of EU democracy promotion in Armenia, Azerbaijan and Nagorno-Karabakh,* Communist and Post-Communist Studies, 2012, Vol. 45, No. 1-2.

ինչպես նաև ԵԱՏՄ-ին միանալու նախադրյալներին: Եվրոպական հեղինակների հրապարակումներում խնդիրը դիտարկվում է ոչ թե Հայաստանի արտաքին քաղաքականության, այլ ԵՄ արտաքին քաղաքականությունում Հայաստանին վերապահվող նշանակության և կիրառվող գործիքակազմի տեսանկյունից:

Վրաստանում և Մոլդովայում ԱԼԳ իրականացումը քննարկվում է առավելապես ԱՀ-ի իրագործման, ԵՄ-ի հետ հարաբերությունների հետագա խորացման և ԵՄ-ին հնարավոր անդամակցության լույսի ներքո: Երկու երկրներում ԱԼԳ իրականացումը քննարկվում է Կ. Բոլկվաձեի և Բ. Լեբանիձեի[28], Լ. Ցուլաձեի[29], Ե. Կորոստելևայի[30], Գ. Բոսսեի[31], Ն. Շապովալովայի և Յ. Բունստրայի[32], Լ. Դելկուրի[33] և Ք. Հագեմանի[34] հրապարակած աշխատանքներում:

Վրաստանին վերաբերող աշխատություններում առավելապես քննարկվում է այդ երկրի լիարժեք եվրոպականացման հնարավորությունը և ԵՄ-ի կողմից Վրաստանին տրամադրվող աջակցության համապատասխանությունը վերջինիս կողմից արձանագրվող առաջընթացին: Խնդիրը հատկապես քննարկված է Բոլկվաձեի ու Լեբանիձեի և Ցուլաձեի հրապարակումներում: Թեև մասնագիտական գրականությունում ՌԴ ազդեցությունը Վրաստանի «եվրոպական ձգտումների» վրա համարվում է ոչ էական, այնուամենայնիվ, Դելկուրի ծավալուն հրապարակումում ուսումնասիրվում է Ռուսաստանի միջամտությունը՝ այն գնահատելով որպես «ապակառուցողական:

Մոլդովայի պարագայում հեղինակներն առավելապես ուշադրություն են դարձնում Ռուսաստանի հետ վերջինիս կապվածությանն ու արտաքին քաղաքականության շուրջ Մոլդովայի ներքին տարաձայնություններին՝ չնայած ԵՄ պահանջների կատարման բարձր աստիճանին: Բոսսեի և Շապովալովայի ու Բունստրայի աշխատանքները կենտրոնանում են ԵՄ-ի կողմից Մոլդովայի նկատմամբ կիրառվող քաղաքականության առանձնահատկությունների, Կորոստելևայի հրապարակումը՝ Մոլդովայի ներքաղաքական անկայունության վրա, իսկ Հագեմանի աշխատանքը մասնավորապես անդրադառնում է Մոլդովայի արտաքին քաղաքականությունում Ռուսաստանի դերին՝ այն դիտարկելով որպես եվրոպականացման էական խոչընդոտ:

---

[28] **Bolkvadze K., Lebanidze B.,** *Building a Security Community in the EU's Neighbourhood? Experiences from Georgia.* In: Rieker P. (ed.), *External Governance as Security Community Building: The Limits and Potential of the European Neighbourhood Policy,* Palgrave Macmillan UK, 2016, pp. 79-105.

[29] **Tsuladze L., Esebua F., Kakhidze I., Kvintradze A., Osepashvili I., Amashukeli M.,** *Performing Europeanization – Political vis-à-vis Popular Discourses on Europeanization in Georgia,* Tbilisi: Nekeri, 2016.

[30] **Korosteleva E.,** *Moldova's European Choice: 'Between Two Stools'?,* Europe-Asia Studies, 2010, Vol. 62, No. 8, pp. 1267-1289.

[31] **Bosse G.,** *The EU's Relations with Moldova: Governance, Partnership or Ignorance?,* Europe-Asia Studies, 2010, Vol. 62, No. 8, pp. 1291-1309.

[32] **Shapovalova N., Boonstra J.,** *The European Union: From Ignorance to a Privileged Partnership with Moldova.* In Kosienkowski M. and Schreiber W. (eds.), *Moldova: Arena of International Influences*, Lanham: Lexington Books, 2012, pp. 51-79.

[33] **Delcour L.,** *Meandering Europeanisation. EU policy instruments and policy convergence in Georgia under the Eastern Partnership,* East European Politics, 2013, Vol. 29, No. 3, pp. 344-357.

[34] **Hagemann C.,** *External Governance on the Terms of the Partner? The EU, Russia and the Republic of Moldova in the European Neighbourhood Policy,* Journal of European Integration, 2013, Vol. 35, No. 7, pp. 767-783.

Հետազոտության օբյեկտը ԵՄ «Արևելյան գործընկերություն» ծրագրի գործառումն է Հայաստանում, Վրաստանում և Մոլդովայում:

Հետազոտության առարկան ԱլԳ ծագումը և 2009-2017 թթ. Հայաստանում, Վրաստանում և Մոլդովայում դրա գործառման առանձնահատկություններն են, ինչպես նաև երեք երկրներում ծրագրի խորհրդարանական դիսկուրսը:

Հետազոտության նպատակն է վերհանել ԱլԳ ծագման և Հայաստանում, Վրաստանում ու Մոլդովայում դրա գործառման նախադրյալներն ու արդյունքները և ԱլԳ-ի շուրջ երեք երկրների խորհրդարանական դիսկուրսը:

Ատենախոսության նպատակին հասնելու համար առաջադրվող **խնդիրներն** են.

- ուսումնասիրել ԵՄ հարևանության քաղաքականության հիմնական բնութագրիչներն ու հարևան երկրների հետ հարաբերությունների կառուցման սկզբունքները,
- վերլուծել ԱլԳ զարգացման էվոլյուցիան, առանձնացնել ԵՀՔ-ի և ԱլԳ-ի տեսական ու նորմատիվ հիմքերը և հետխորհրդային տարածաշրջանում դրանց գործառման պատմությունը,
- վերլուծել ԱլԳ-ին Հայաստանի, Վրաստանի և Մոլդովայի մասնակցության և ԵՄ-ի հետ հարաբերությունների զարգացման առանձնահատկությունները,
- առանձնացնել Հայաստանում, Վրաստանում և Մոլդովայում ԱլԳ-ի գործառման վրա ազդող հիմնական գործոնները,
- բովանդակային վերլուծության ենթարկել ԵՄ-ի և ուսումնասիրվող երեք երկրների միջև ԱլԳ-ի շրջանակներում կնքված շրջանակային փաստաթղթերը, այն է՝ Հայաստան-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ), Վրաստան-ԵՄ ԱՀ-ն և Մոլդովա-ԵՄ ԱՀ-ն, և վերհանել դրանց առավելություններն ու թերությունները,
- Համադրաբար վերլուծել երեք երկրների խորհրդարաններում ներկայացված քաղաքական ուժերի դիրքորոշումները ԵՄ-ի հետ հարաբերությունների զարգացման վերաբերյալ, ցույց տալ դրանց ընդհանրություններն ու տարբերությունները, ինչպես նաև ակնկալիքները առկա մակարդակում համագործակցության ծավալումից:

Հետազոտությունում կիրառված մեթոդները: Ատենախոսությունում օգտագործվել են թե՛ համագիտական, թե՛ մասնավոր գիտական մեթոդներ: Կիրառված համագիտական մեթոդներն են համեմատականը, համակարգայինը, կառուցվածքային-ֆունկցիոնալը, նկարագրականը, դիալեկտիկականը, անալոգիան, անալիզը, սինթեզը: Աշխատանքի մասնավոր նպատակներից ելնելով կիրառվել են փաստաթղթերի բովանդակային վերլուծության, գործընթացային վերլուծության և դիսկուրս վերլուծության մեթոդները: ԱլԳ զարգացման էվոլյուցիայի ուսումնասիրման, ԵՀՔ-ի ու ԱլԳ-ի տեսական ու նորմատիվ հիմքերն առանձնացնելու, ինչպես նաև ուսումնասիրվող երեք երկրների ու ԵՄ-ի միջև առկա պայմանագրային հարաբերությունների քննարկման նպատակով կիրառվել է փաստաթղթերի վերլուծության մեթոդը՝ ընդգրկելով Եվրոպական հանձնաժո-

ղովի (ԵՀ), ԵՄ խորհրդի, Եվրոպական խորհրդարանի և ԵՄ այլ կառույցների կողմից ընդունված/հրապարակված փաստաթղթերը, ինչպես նաև ԵՄ-ի հետ Հայաստանի, Վրաստանի ու Մոլդովայի կնքած շրջանակային համաձայնագրերի էլեկտրոնային բնօրինակների ամբողջական տեքստերը: Ուսումնասիրվող երեք երկրների խորհրդարանական խմբակցություններում ԱլԳ-ի շրջանակներում ԵՄ-ի հետ հարաբերությունների զարգացման շուրջ առկա մոտեցումների ուսումնասիրման և այդպիսով հետազոտությունն էմպիրիկ տվյալներով համալրելու նպատակով ընտրվել է կիսաձևայնացված խորին հարցազրույցների մեթոդը: 2017 թ. նոյեմբերից մինչև 2018 թ. փետրվար ընկած ժամանակահատվածում երեք երկրների խորհրդարանական խմբակցությունների տասնմեկ ներկայացուցիչների հետ անցկացվել են հարցազրույցներ: Ռեսպոնդենտների համաձայնության դեպքում հարցազրույցները ձայնագրվել են: Որոշ մեջբերումներ աշխատանքում կատարված են անանուն՝ ելնելով ռեսպոնդենտների պահանջից: Հարցազրույցների տևողությունը եղել է 30-45 րոպե: Հայաստանցի ռեսպոնդենտների հետ հարցազրույցներն անկացվել են հայերենով, Վրաստանում և Մոլդովայում՝ անգլերենով կամ ռուսերենով: Հարցազրույցների հարցաշարերը ներկայացված են հավելված 1-ում:

Դեպքերի ընտրությունը կատարվել է հաշվի առնելով Հայաստանի, Վրաստանի և Մոլդովայի ֆիզիկական ու ժողովրդագրական նմանությունները, ինչպես նաև տնտեսական զարգացման ցուցանիշները և էթնոքաղաքական հակամարտությունների առկայությունը, որը արտաքին քաղաքական կողմնորոշումը զուգորդում է անվտանգության ապահովման հետ: Մեկ այլ չափանիշ է ԵՄ-ի հետ հարաբերությունների բնույթն ու խորությունը: ԱլԳ-ում ներառված մյուս երկրները՝ Ուկրաինան, Բելառուսը և Ադրբեջանը, այս առումով պակաս համեմատելի են ընտրված դեպքերի հետ: Թեև Ուկրաինայում ևս ԵՄ-ի հետ հարաբերությունների զարգացումը արտաքին քաղաքական առաջնահերթություն է, սակայն, լինելով ԱլԳ-ում ներգրավված երկրներից ամենամեծը թե՛ տարածքով, թե՛ բնակչության թվով, թե՛ տնտեսության ծավալով, ինչպես նաև հանդիսանալով էներգետիկ ռեսուրսների տարանցման կարևոր երկիր, Ուկրաինան ԵՄ-ի համար նկատելիորեն ավելի մեծ նշանակություն ունի, քան ուսումնասիրվող երեք երկրները: Ադրբեջանի համար էլ ԵՄ-ն էներգիայի արտահանման առաջնային ուղղությունն է, ուստի երկկողմ հարաբերությունները գերազանցապես կառուցված են այս ասպեկտի վրա:

Բացի տնտեսական նշանակությունից՝ Ադրբեջանի, ինչպես նաև Բելառուսի պարագայում կարևոր է հաշվի առնել նաև առկա ավտորիտար քաղաքական վարչակարգերը, որոնք էական խոչընդոտ են ԵՄ-ի հետ հարաբերությունների զարգացման համար և կասեցնում են Հայաստանի, Վրաստանի և Մոլդովայի հետ առկա կամ ակնկալվող համագործակցության մակարդակի ձեռքբերումը: Բացի այդ, ԵՄ-Ադրբեջան և ԵՄ-Բելառուս հնարավոր ԱՀ-ները չէին կարող ներառել ԽՀԱԱԳ-ն, քանզի այն պահանջում է տվյալ պետության անդամակցություն Առևտրի համաշխարհային կազմակերպությանը (ԱՀԿ), մինչդեռ Ադրբեջանը և Բելառուսն ունեն միայն դիտորդի կարգավիճակ:

Անշուշտ, դժվար է պնդել, որ Հայաստանը, Վրաստանը և Մոլդովան սույն հետազոտության համատեքստում լիովին համեմատելի դեպքեր են, քանզի որոշակիորեն տարբեր են դրանց արտաքին քաղաքական ու անվտանգային օրակարգերը: Այնուամենայնիվ, առկա նմանությունները բավարար հիմք են ծառայում համեմատական վերլուծություն իրականացնելու համար:

Ատենախոսության գիտական նորույթը համեմատական վերլուծության միջոցով Հայաստանում, Վրաստանում և Մոլդովայում ԱլԳ գործառման առանձնահատկությունների վերհանումն է և երեք երկրների խորհրդարանական դիսկուրսում ԱլԳ-ի շուրջ առկա մոտեցումների համապարփակ քննությունը: Մասնավորապես՝ սույն հետազոտությամբ համանման մասնագիտական ուսումնասիրություններում առաջին անգամ.

- Համապարփակ վերլուծության են ենթարկվել Հայաստանի, Վրաստանի և Մոլդովայի նկատմամբ ԵՄ քաղաքականության առանձնահատկությունները արտաքին կառավարման երեք մոդելների տեսանկյունից և եզրակացվել, որ նշված երեք երկրների պարագայում «եվրոպականացումն» առավելապես հիմնվել է ուժահեն մոդելի, այսինքն՝ աշխարհաքաղաքական մրցակցության վրա: Այնուամենայնիվ, հատկապես Մոլդովայի պարագայում տեսանելի է նաև տեղական ազդեցությունը, մինչդեռ ինստիտուցիոնալ մոդելը համաչափորեն կիրառվել է բոլոր երեք երկրներում:
- ԵՄ առանցքային փաստաթղթերի բովանդակային վերլուծության միջոցով ԵՀՔ-ի և ԱլԳ-ի ձևավորումն ու զարգացումը ներկայացվել է՝ որպես ԵՄ արտաքին քաղաքականության, անվտանգության ապահովման, ինչպես նաև եվրոպական արժեհամակարգի ընդլայնման կարևորագույն գործիք:
- Առանձնացվել են Հայաստանում, Վրաստանում և Մոլդովայում ԱլԳ-ի գործառման հիմնական խոչընդոտները, այն է՝ Ռուսաստանի աշխարհաքաղաքական հակազդեցությունը, հակամարտությունների կարգավորման գործում ԵՄ անբավարար ներգրավվածությունը, իսկ Վրաստանի և Մոլդովայի պարագայում՝ նաև ԵՄ-ին անդամակցության հեռանկարի բացակայությունը:
- Բովանդակային վերլուծության են ենթարկվել Հայաստան-ԵՄ ՀԸԳՀ-ն, Վրաստան-ԵՄ ԱՀ-ն ու Մոլդովա-ԵՄ ԱՀ-ն, համեմատական քննության են առնվել դրանց հիմնական դրույթները և վերհանվել հիմնական տարբերությունները, որոնք առավելապես վերաբերում են տնտեսության ու առևտրի ոլորտներին, մինչդեռ մնացած ոլորտներում համագործակցության շրջանակը գրեթե նույնն է: Միաժամանակ ցույց է տրվում, որ ԵՀՔ 2015 թ. վերանայումից հետո երրորդ երկրների հետ ծավալվող համագործակցության ու կնքվող փաստաթղթերի հարցում ԵՄ-ն սկսեց ավելի ճկուն մոտեցում դրսևորել և հաշվի առնել գործընկեր երկրների ներքին և աշխարհաքաղաքական դրությունը:
- Հայաստանի, Վրաստանի և Մոլդովայի խորհրդարաններում ներկայացված քաղաքական ուժերի ներկայացուցիչների հետ խորին հարցազրույցների միջոցով համապարփակ կերպով ուսումնասիրվել են վերջիններիս դիրքորոշումները ԵՄ-ի հետ հարաբերությունների զարգացման և իրենց երկրի շահերին կնքված շրջանակային փաստաթղթերի համապատասխանության վերաբերյալ:

▪ Էմպիրիկ ուսումնասիրության արդյունքները զուգորդելով սեփական վերլուծության հետ՝ առանձնացվել են նաև ԵՄ-ի Հայաստանի, Վրաստանի և Մոլդովայի հարաբերությունների զարգացման հիմնական միտումներն ու հեռանկարները:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները.

▪ Կառավարման սեփական նմուշների տարածման համար ԵՄ նորմատիվ ռեսուրսները սովորաբար անբավարար են, և թեև, օրինակ, Վրաստանի պարագայում դրանք նկատելիորեն գրավիչ են եղել, այնուամենայնիվ, դժվար է պնդել, որ ԵՄ-ն ուսումնասիրվող երեք երկրներում կարողացել է իր ինստիտուցիոնալ ներուժի շնորհիվ նպաստել դրանց աշխարհաքաղաքական կողմնորոշմանը դեպի ԵՄ: Երեք երկրների պարագայում ԱԼԳ գործառումը պայմանավորող գործոնների համախումբն առավելապես ներառված է ուժահեն մոդելի շրջանակներում, այսինքն՝ Ռուսաստանի հետ երկկողմ հարաբերությունների և ԵՄ-Ռուսաստան աշխարհաքաղաքական մրցակցության համատեքստում:

▪ ԵՄ ինտեգրացիոն մոդելը հիմնված է սեփական գրավչության ուժի տարածման վրա, մինչդեռ ՌԴ վարած ինտեգրացիոն քաղաքականությունն էապես տարբերվում է: Ռուսաստանը նվազ չափով է օգտվել ԱՊՀ կազմակերպական ներուժից և փոխարենն առանձին երկրների հետ հաստատել երկկողմ հարաբերություններ, որտեղ կարող է կիրառել լայն գործիքակազմ՝ ինստիտուցիոնալ համագործակցությունից ու տնտեսական խթանիչներից մինչև կոշտ ուժ: Ի տարբերություն ՌԴ-ի՝ ԵՄ-ն ստիպված է եղել սահմանափակվել իր իսկ հռչակած նորմատիվությամբ և բացառել ռազմական միջամտությունները: Միևնույն ժամանակ, Ռուսաստանի մոտեցումն առանձին երկրների և ԵՄ-ի միջև համագործակցության խորացման օրակարգին մեծապես պայմանավորված է ԵՄ-ի հետ տվյալ պետության հարաբերությունների սերտության աստիճանով: Որքան ընդլայնված ու շոշափելի է ԵՄ-ի հետ ինստիտուցիոնալ ինտեգրումը, այնքան սպառնալից այն կարող է ընկալվել Ռուսաստանի կողմից՝ հանգեցնելով առավել հուժկու հակազդեցության:

▪ ԵՄ-ի կողմից փափուկ ուժի անբավարար կիրառումը և կոշտ ուժի ռեսուրսների բացակայությունը ԱԼԳ-ին մասնակցող երկրներին թույլ չի տվել սեփական անվտանգային խնդիրների լուծումը կապել ԵՄ-ի հետ: Չնայած նրան, որ Եվրոպական անվտանգության ռազմավարությամբ տարածաշրջանային հակամարտություններն ու «ձախողված պետությունները» սահմանվում են որպես ԵՄ արտաքին քաղաքական հիմնական սպառնալիքներ ու մարտահրավերներ՝ Արցախի, Աբխազիայի ու Հվ. Օսիայի և Մերձդնեստրի հակամարտություններում ԵՄ-ն խիստ սահմանափակ ներգրավվածություն է ունեցել: Վրաստանի պարագայում այս գործոնի բացասական ազդեցությունը պակաս տեսանելի է եղել, քանզի մինչև ԱԼԳ հիմնումը ՌԴ-Վրաստան հարաբերություններն արդեն իսկ բավականաչափ լարված են եղել, ինչն ամրապնդել է ԵՄ-ի գերակա դիրքը Վրաստանի արտաքին քաղաքականությունում: Մինչդեռ Հայաստանի և Մոլդովայի պարագայում անվտանգության հիմնահարցը արտաքին քաղաքական կողմնորոշման հարցում դեռևս էական տարակարծությունների առիթ է տվել:

▪ Ուսումնասիրվող երեք երկրներից ԱլԳ իրականացումն առավել խոցելի է եղել Մոլդովայում, որտեղ արտաքին գործոնների կողքին կարևոր նշանակություն են ունեցել նաև ներքաղաքական տեղաշարժերը: Չնայած նրան, որ ԱլԳ գործառման ընթացքում Մոլդովան եղել է դրա առաջամարտիկներից մեկը և արդեն իսկ ուժի մեջ է մտել ԵՄ-Մոլդովա ԱՀ-ն, ներառյալ՝ ԽՀԱԱԳ-ն, այնուամենայնիվ, արտաքին քաղաքական կուրսի հարցում քաղաքական ղեկավարության շրջանում մշտապես եղել են էական տարբերություններ, որոնք թույլ չեն տալիս երաշխավորված համարել Մոլդովայի և ԵՄ-ի միջև հարաբերությունների գործող մակարդակի կայունությունը:

▪ Հայաստանի, Վրաստանի և Մոլդովայի հետ հարաբերություններում ԵՄ-ի կողմից սահմանվել են գրեթե նույն առաջնահերթությունները և կիրառվել եվրոպականացման նույն գործիքները, ինչը դրսևորվում է երեք երկրների հետ կնքած շրջանակային համաձայնագրերի բովանդակային նմանությամբ: Այնուամենայնիվ, այս երկրների առանձնահատկությունները բավարար չափով հաշվի չառնելն ու միայն ֆինանսական հատկացումների միջոցով տարբերակում դնելը հանգեցրել է երկկողմ հարաբերությունների տարբեր զարգացումների: Միայն 2015 թ. ԵՀՔ վերանայման միջոցով ԵՄ-ն կարողացավ որոշակի ճկունություն հաղորդել ԱլԳ-ին, ինչի արդյունքում հնարավոր եղավ ԵՄ-Հայաստան Համա

Ատենախոսության տեսական նշանակությունը եվրոպականացման՝ որպես ԵՄ հարևանության քաղաքականության հենքի դիտարկումն է, քաղաքական փոխակերպման լույսի ներքո դրա վերլուծությունն ու եվրոպականացման հիմնական գործիքների, մակարդակների ու դետերմինանտների քննությունը, որը կարող է կարևոր աղբյուր լինել համանման գիտական հետազոտություններ իրականացնելիս: Աշխատանքի արդյունքները թույլ են տալիս նաև ավելի լավ ընկալել աշխարհաքաղաքական զարգացումների համատեքստում Հայաստանի, Վրաստանի և Մոլդովայի նման փոքր պետությունների առավելագույնս շահավետ դիրքավորման անհրաժեշտությունը:

Ատենախոսության գործնական նշանակությունը: Հետազոտության արդյունքները կարող են նպաստել արտաքին քաղաքական գերատեսչություններում ԵՄ հարևանության քաղաքականության շուրջ առավել խորքային պատկերացումների ձևավորմանը և նպատակային քաղաքական գործողությունների նախաձեռնմանը: Աշխատանքի շրջանակներում մի շարք հիմնահարցերի, ինչպիսիք են երրորդ երկրների հետ հարաբերություններում ԵՄ-ի կողմից կիրառվող քաղաքականության նորմատիվ հիմքերը, Հայաստանի, Վրաստանի ու Մոլդովայի արտաքին քաղաքականությունում ԵՄ դերը և վերջինիս հետ հարաբերությունների խորացումն ու դրա վրա Ռուսաստանի ազդեցությունը, գործնական վերլուծությունը կարող է կարևոր աղբյուր ծառայել գիտնականների, քաղաքական վերլուծաբանների, քաղաքականություն մշակողների և ուսումնասիրվող խնդրով հետաքրքրված լայն հանրության համար: Ատենախոսությունը կարող է օգտագործվել այլ գիտական հետազոտություններում, ինչպես նաև բուհական համակարգում՝ եվրոպական ուսումնասիրությունների ոլորտում դասընթացների ու ծրագրերի, ինչպես նաև ուսումնական ձեռնարկների կազմման նպատակով:

Ատենախոսության փորձաքննությունը: Հետազոտության հիմնական դրույթները և արդյունքները քննարկվել են շուրջ 10 տեղական և միջազգային գիտաժողովներում, աշխատաժողովներում, սեմինար-քննարկումներում:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են 8 գիտական հրապարակումներում:

Աշխատանքի ծավալն ու կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից (յոթ ենթագլուխներով), եզրակացությունից, օգտագործված գրականության և աղբյուրների ցանկից (174 անվանում), հավելվածներից և հապավումների ցանկից: Ատենախոսության ընդհանուր ծավալը 143 մեքենագիր էջ է:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվում է թեմայի արդիականությունն ու գիտական մշակվածության աստիճանը, ներկայացվում հետազոտության օբյեկտը և առարկան, առանձնացվում աշխատանքի նպատակներն ու խնդիրները, կիրառված մեթոդները, ուսումնասիրվող դեպքերի ընտրության չափանիշները, գիտական նորույթը, տեսական ու գործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին գլուխը վերնագրված է **««ԵՎՐՈՊԱԿԱՆԱՑՈՒՄԸ»՝ ՈՐՊԵՍ ԵՄ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՔ»** և բաղկացած է երկու ենթագլխից: Այն նվիրված է «եվրոպականացում» եզրի գիտական մշակմանն ու հայեցակարգայնացմանը:

Առաջին՝ **««Եվրոպականացում» հասկացության ծագումը, զարգացումը և սահմանումները»** ենթագլխում ներկայացվում է հասկացության բազմակողմանիությունը և մասնագիտական գրականությունում առկա տարբեր մոտեցումները, տեսական քննության ենթարկվում եվրոպականացման կիրարկումը ԵՄ հարևանության քաղաքականությունում: Ցույց է տրվում, որ եվրոպականացումը ուղղահայաց հարաբերությունների սկզբունքով ԵՄ-ի կողմից երրորդ երկրներում քաղաքական փոխակերպման առաջացմանը միտված տեսական շրջանակ է:

Երկրորդ՝ **«Եվրոպականացման գործիքները, մակարդակները և դետերմինանտները»** ենթագլխում առանձնացվում է եվրոպականացման երեք գործիք՝ արտաքին խթաններ, սոցիալական ուսուցում և փորձի կրկնօրինակում, երեք մակարդակ՝ նորմատիվ-իրավական, ինստիտուցիոնալ և սոցիալ-մշակութային, և երեք դետերմինանտ՝ ԵՄ հարևանության քաղաքականություն, երրորդ երկրների ներքաղաքական միջավայր և արտաքին ազդեցություն:

Աշխատանքի երկրորդ գլուխը վերնագրված է **«ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ, ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ՄՈԼԴՈՎԱՅՈՒՄ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ «ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ» ԳՈՐԾԱՌՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ԵՎ ՆԵՐԿԱ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ»** և բաղկացած է երեք ենթագլխից: Այստեղ քննարկվում են ուսումնասիրվող երեք երկրներում ԵՄ հա-

ռևանության քաղաքականության իրականացման ընթացքն ու առանձնահատկությունները:

Առաջին՝ **«Եվրոպական հարևանության քաղաքականության ծագումը և իրականացումը Հայաստանում, Վրաստանում և Մոլդովայում մինչև 2008 թ.»** ենթագլխում քննարկվում է ԽՍՀՄ փլուզումից հետո ուսումնասիրվող երեք երկրներում ԵՄ ներգրավվածության և ԵՀՔ-ում դրանց ներառման հիմքերը, ինչպես նաև ԵՀՔ երկկողմ գործողությունների ծրագրերով սահմանված համագործակցության ձևաչափերը: Հիմնավորվում է, որ մինչև 2008 թ. ԵՀՔ շրջանակներում Հայաստանի, Վրաստանի և Մոլդովայի հետ հարաբերություններում ԵՄ-ն կիրառել է հիմնականում նույն մեխանիզմները՝ փորձելով այս երկրներում առաջ բերել քաղաքական փոխակերպման գործընթաց, սակայն ոչ մի երկրում նման առանցքային փոփոխություններ չեն եղել:

Երկրորդ՝ **«Հայաստանում, Վրաստանում և Մոլդովայում 2009-2017 թթ. «Արևելյան գործընկերության» գործառման նախադրյալներն ու արդյունքները»** ենթագլխում ներկայացվում է ծրագրի մեկնարկային պայմանները, ԵՀՔ երկու վերանայումները, ուսումնասիրվող երկրների ու ԵՄ-ի միջև քաղաքական ու առևտրատնտեսական հարաբերությունների զարգացման ընթացքը և երկկողմ շրջանակային համաձայնագրերի էությունը, դրանց ընդհանրություններն ու տարբերությունները:

Երրորդ՝ **«Հայաստանում, Վրաստանում և Մոլդովայում «Արևելյան գործընկերության» իրականացման վրա ազդող գործոնները»** ենթագլխում առանձնացվում են ծրագրի գործառման վրա ազդող հիմնական գործոնները, այն է՝ Ռուսաստանի Դաշնության մոտեցումը և հակազդեցությունը, հակամարտությունների կարգավորմանը նպաստելու ԵՄ սահմանափակ ռեսուրսները, ուսումնասիրվող երկրների ներքաղաքական միջավայրը և մոտեցումները ԵՄ-ի նկատմամբ, ինչպես նաև ԵՄ երկրների որոշակի անմիասնականությունը ԱլԳ-ին վերագրվող կարևորության հարցում և շահառու երկրներից ԵՄ-ի կողմից պահանջվող փոփոխությունների և այդ երկրների համար դրանցից ստացվելիք օգուտների բացասական հարաբերակցությունը: Ներկայացվածի հիման վրա կատարվում է դեպքերի տեղայնացում եվրոպականացման ինստիտուցիոնալ, ուժահեն և տեղային ազդեցության մոդելների շրջանակում:

Ատենախոսության երրորդ գլուխը վերնագրված է **««ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ» ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԴԻՍԿՈՒՐՍԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ»** և բաղկացած է երկու ենթագլխից: Այն ներառում է Հայաստանի, Վրաստանի և Մոլդովայի խորհրդարանական ուժերի կողմից ԱլԳ-ի շուրջ առկա պատկերացումների վերլուծություն և ԵՄ-ի հետ երկկողմ հարաբերությունների զարգացման հեռանկարների քննարկում:

Առաջին՝ **««Արևելյան գործընկերության» տեղը Հայաստանի, Վրաստանի և Մոլդովայի խորհրդարանական դիսկուրսում»** ենթագլխում ուսումնասիրվող երկրների խորհրդարանական ուժերի ներկայացուցիչների հետ անցկացված խորին հարցազրույցների հիման վրա ներկայացվում է վերջիններիս մոտեցումները երկու խնդրի վերաբերյալ՝ ԵՄ-ի տեղ սեփական արտաքին քաղաքականու-

թյունում և եվրոպական ինտեգրումը՝ որպես աշխարհաքաղաքական ընտրություն: Ցույց է տրվում, որ ԵՄ-ի նկատմամբ խորհրդարանական մոտեցումները թեև գերազանցապես դրական են, սակայն ոչ մի երկրում միանշանակ չեն: Աշխարհաքաղաքական տեսանկյունից Վրաստանն ամբողջությամբ միտված է դեպի ԵՄ, մինչդեռ Հայաստանի և Մոլդովայի պարագայում ՌԴ-ն էական դերակատար է և արտաքին քաղաքականությունում առկա է հարաբերական հավասարակշռության պահպանման անհրաժեշտություն՝ պայմանավորված անվտանգային հիմնախնդիրներով:

Երկրորդ՝ **«ԵՄ-ի հետ Հայաստանի, Վրաստանի և Մոլդովայի հարաբերությունների զարգացման հեռանկարները»** ենթագլխում ներկայացվում է ԵՄ-ի հետ երկկողմ համագործակցության հետագա ընթացքի շուրջ առկա խորհրդարանական դիսկուրսը և վերլուծության ենթարկվում հնարավոր ներքաղաքական փոփոխությունների ազդեցությունը ուսումնասիրվող երկրների արտաքին քաղաքական օրակարգի վրա: Ցույց է տրվում, որ առաջիկա տարիներին Հայաստանում և Վրաստանում անգամ իշխանափոխության պարագայում արտաքին քաղաքական կտրուկ շրջադարձեր չեն ակնկալվում, մինչդեռ Մոլդովայում 2018 թ. խորհրդարանական ընտրությունները կարող են մեծապես ազդել արտաքին քաղաքական կուրսի փոփոխության վրա՝ այն միտելով դեպի ՌԴ:

Եզրակացությունում ներկայացվում են հետազոտության հիմնական արդյունքներն ու հետևությունները:

- Հարևան տարածաշրջանների հետ ԵՄ-ի հարաբերությունները սովորաբար հիմնված են եղել տեխնիկական համագործակցության և ԵՄ-ի կողմից ֆինանսական աջակցության վրա, և միայն ԳՀՀ-ների ստորագրմամբ ավելացավ համագործակցության քաղաքական բաղադրիչը, որը թեև ամրապնդվեց ԵՀՔ-ի հիմնմամբ, սակայն իրապես նպատակաուղղված արտաքին քաղաքականության վերածվեց միայն ԱլԳ-ի և ԵՄԳ-ի ստեղծմամբ, քանզի որոշակի տարբերակում մտցվեց գործընկեր երկրների միջև: Այնուամենայնիվ, ԱլԳ-ին մասնակցող երկրների տարբերությունները և, իհարկե, աշխարհաքաղաքական դրությունները ԵՄ-ին ստիպեցին էլ ավելի նկատելի տարբերակումներ դնել գործընկեր երկրների միջև, ինչը դրսևորվեց 2011 ու 2015 թթ. ԵՀՔ-ի վերանայումներով:
- ԵՄ-ի կողմից հարևան երկրների հետ գործակցային հարաբերությունների զարգացման հիմնական նպատակը ԵՄ արտաքին անվտանգության ապահովումն է, իսկ արժեքային ընդլայնումն ու տնտեսական համագործակցության խորացումը առավելապես ծառայում են առաջնային նպատակի իրագործմանը: Այս եզրականացությամբ կարելի է նաև բացատրել ԵՄ-ի կողմից ԱլԳ երկրների միջև անբավարար տարբերակումը: Բացի այդ, ԵՄ արտաքին գործողությունները մեծապես պայմանավորված են ԵՄ ներքին փոփոխություններով, ինչի ընդհանուր ապացույցը ԵՀՔ հիմնումն էր՝ որպես 2004 թ. ԵՄ արևելյան ընդլայնումից բխող աշխարհաքաղաքական հետևանքների կառավարման միջոց:
- Հայաստանի, Վրաստանի և Մոլդովայի հետ ԵՄ-ի հարաբերությունները ԵՀՔ-ի, իսկ հետագայում՝ ԱլԳ-ի շրջանակներում կառուցված են եղել գրեթե նույն առաջնահերթությունների վրա և նպատակ են ունեցել երեք երկրները ԵՄ-

ի հետ ասոցացնելու միջոցով հասնելու ավելի բարձր մակարդակի համագործակցության: Այնուամենայնիվ, այս երկրներում ԱլԳ-ի իրականացման վրա ազդել են մի շարք գործոններ, որոնք ձևափոխել են այն: Դրանց ազդեցության վերլուծությունը ցույց է տվել, որ Հայաստանում, Վրաստանում և Մոլդովայում ԱլԳ-ի իրականացումն առավելապես հիմնվել է ուժահեն մոդելի, այսինքն՝ աշխարհաքաղաքական մրցակցության վրա:

- Հայաստան-ԵՄ ՀԸԳՀ-ով, Վրաստան-ԵՄ ԱՀ-ով և Մոլդովա-ԵՄ ԱՀ-ով սահմանվող համագործակցության ոլորտները հիմնականում նույնն են՝ բացառությամբ առևտրի ոլորտի: Վրաստանի և Մոլդովայի հետ կնքված ԱՀ-ները ներառում են նաև ԽՀԱԱԳ-ներ, որոնք ապահովում են ապրանքների, ծառայությունների և կապիտալի ազատ տեղաշարժ երկու կողմերի միջև, մինչդեռ Հայաստանի հետ կնքված ՀԸԳՀ-ում այս բաղադրիչը ներառված չէ՝ պայմանավորված ԵԱՏՄ-ին անդամակցությունից հետո ստանձնած պարտավորություններով: Երեք երկրների հետ համագործակցությունը առավել նկատելիորեն տարբերակվում է ԵՄ-ի կողմից տրամադրվելիք ֆինանսական միջոցների ծավալի տեսանկյունից: Իհարկե, շրջանակային համաձայնագրերի իրագործման վրա կարևոր ազդեցություն է ունենալու նաև մարդկանց ազատ տեղաշարժը, որը Վրաստանի և Մոլդովայի պարագայում արդեն ուժի մեջ է մտել, իսկ Հայաստանի դեպքում դեռևս չեն սկսվել դրա շուրջ բանակցությունները:
- ԵՄ-ի կարևոր ձեռքբերում է Հայաստանի հետ ՀԸԳՀ-ի կնքումը, քանզի դրա միջոցով գործնականում կիրառվեց ԵՀՔ 2015 թ. վերանայումը և ցույց տրվեց, որ երրորդ երկրների հետ համագործակցությունում առկա է ավելի շատ ճկունություն: 2013 թ. հետո առաջացած իրողությունները ԵՄ-ին ստիպեցին նոր մոտեցում որդեգրել ԱլԳ տարածաշրջանի երկրների հանդեպ՝ չպահանջելով բացարձակ եվրոպականացում, այլ բավարարվելով սահմանափակ համագործակցությամբ: Իհարկե, ԵԱՏՄ-ին միանալով և ԵՄ-ի հետ ոչ թե ԱՀ-ի, այլ ՀԸԳՀ-ի ստորագրմամբ Հայաստանը չստացավ ԵՄ-ի հետ ազատ առևտրի հնարավորություն, սակայն ճկուն արտաքին քաղաքականության շնորհիվ ՌԴ-ի հետ ռազմավարական դաշնակցությունն ու ԵԱՏՄ-ին անդամակցությունը լրացվեց ԵՄ-ի հետ հարաբերությունների խորացմամբ՝ համատեղելով երկու ինտեգրացիոն նախագծերը և խուսափելով ՌԴ-ԵՄ շահերի բախման կիզակետ լինելուց:
- Վրաստանի և Մոլդովայի հետ հարաբերությունները, կառուցված լինելով արդեն գործող ԱՀ-ների և ԽՀԱԱԳ-ների վրա, լուրջ հիմք են ապահովում երկկողմ համագործակցության զարգացման ու խորացման համար, ինչը պայմանավորված է նաև այս երկրներում հակամարտությունների կարգավորմանը տրվող նշանակությամբ: Եթե անվտանգային հիմնահարցը գերակա խնդիր է Հայաստանի արտաքին հարաբերությունների կառուցման տեսանկյունից, ապա Վրաստանում ու Մոլդովայում եվրոպական ինտեգրմանը վերագրվող կարևորությունը համեմատելի է հակամարտությունների կարգավորմանը տրվող նշանակության հետ: Երկարաժամկետ բարեփոխումների իրականացման պարագայում այս երկու երկրները կարող են հավակնել նաև ԵՄ անդամակցության, որը չպետք է բացառվի օրակարգից: Եթե մինչ այժմ ԵՄ-ի կողմից առաջարկված

խթանիչների հաշվին Վրաստանը և Մոլդովան ակտիվորեն ձգտել են սեփական քաղաքական ու տնտեսական համակարգերը համապատասխանեցնել ԵՄ չափանիշներին, ապա հետագա համագործակցությունը կարող է խաթարվել նոր խթանիչի բացակայության պատճառով:

- Հայաստանի, Վրաստանի և Մոլդովայի խորհրդարանական ուժերի շրջանում ընդհանուր առմամբ առկա է դրական մոտեցում ԵՄ-ի նկատմամբ, իսկ վերջինիս հետ համագործակցությունն ընկալվում է իբրև կարևոր խթան երկրի զարգացման համար: Այնուամենայնիվ, առկա են որոշ տարբերություններ, որոնք հակիրճ կարելի է նկարագրել հետևյալ կերպ: Վրաստանում ԵՄ-ն դիտարկվում է բացարձակապես դրական լույսի ներքո, իսկ եվրոպական ինտեգրացիան բոլոր խորհրդարանական ուժերի համար գերակա ուղղություն է: Հայաստանում խնդրի շուրջ առկա է պրագմատիկ մոտեցում, և թեև ԵՄ-ի հետ համագործակցությանը դիտարկվում է որպես զարգացման կարևոր խթան, սակայն ոչ մի կուսակցության կողմից եվրոպական ինտեգրումը չի ընկալվում որպես գերակա արտաքին քաղաքական ուղղություն: Մոլդովայում ԵՄ-ի նկատմամբ դիրքորոշումներն ավելի մասնատված են խորհրդարանական ոչ բոլոր ուժերն են սատարում երկկողմ հարաբերությունների զարգացման ընթացքը:
- Աշխարհաքաղաքական տեսանկյունից Վրաստանում ԵՄ-ի հետ հարաբերությունների խորացումն ու ԵՄ լիարժեք անդամակցությունն արտաքին քաղաքական առաջնահերթություն են, որոնք պայմանավորված չեն ՌԴ-ի կամ այլ դերակատարների հետ հարաբերությունների զարգացման դինամիկայով: Հայաստանում և Մոլդովայում Ռուսաստանը հիմնականում ընկալվում է որպես կարևոր գործընկեր, որի հետ սերտ հարաբերություններն էական նշանակություն ունեն երկու երկրների անվտանգային քաղաքականության համատեքստում: Հայաստանում և Մոլդովայում ոչ մի քաղաքական կուսակցության ներկայացուցիչ չի սատարում ՌԴ-ի հետ հարաբերությունների մակարդակի իջեցումը, առավել ևս՝ խզումը: Արտաքին քաղաքական դաշտում ԵՄ-ի ու ՌԴ-ի միջև հավասարակշռության պահպանումը դիտարկվում է որպես պետության գերակա շահերի իրականացման նախապայման:
- Հաշվի առնելով թե՛ Հայաստանում, թե՛ Վրաստանում, թե՛ Մոլդովայում գործում է կառավարման խորհրդարանական համակարգը, հարկ է նշել, որ ԵՄ-ի հետ երեք երկրների հարաբերությունների հետագա զարգացումն էապես պայմանավորված է լինելու խորհրդարանական ուժերի շրջանում դրա նկատմամբ առկա դիրքորոշումների փոփոխություններով: Մասնավորապես՝ Մոլդովայի խորհրդարանական խմբակցությունների զբաղեցրած տեղերը, հետևաբար՝ նաև արտաքին քաղաքականության շուրջ մոտեցումները հաճախ փոփոխվում են: Նման փոփոխություն Մոլդովայում կարող է տեղի ունենալ նաև 2018 թ. խորհրդարանական ընտրությունների արդյունքում:

Հետազոտության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ գիտական հրապարակումներում.

1. **Hakobyan M.,** *The Normative EU, the Hard Power Russia and the Small States Between Them: Cases of Armenia, Georgia and Moldova,* Securitologia, No. 1, Warsaw, 2017, pp. 7-18.

2. **Hakobyan M.,** *The European Union's Conflict Resolution Capacity in Armenia, Georgia and Moldova: Undermining the Eastern Partnership?,* Securitologia, No. 1, Warsaw, 2017, pp. 65-74.

3. **Հակոբյան Մ.,** *Եվրոպական միությունը Հայաստանի, Վրաստանի և Մոլդովայի արտաքին քաղաքական օրակարգում մինչև «Արևելյան գործընկերության» մեկնարկը,* Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, քաղաքագիտություն, № 3 (24), Երևան, 2017, էջ 27-37:

4. **Հակոբյան Մ.,** *Եվրոպական հարևանության քաղաքականության շրջանակներում Եվրոպական միության «փափուկ ուժի» կիրառումը Լեռնային Ղարաբաղի, Աբխազիայի, Հարավային Օսիայի և Մերձդնեստրի հակամարտությունների կարգավորման գործում,* Հանրային կառավարում, № 3-4, Երևան, 2017, էջ 178-186:

5. **Հակոբյան Մ.,** *Եվրոպականացումը՝ որպես քաղաքական փոխակերպման գործիք «Արևելյան գործընկերություն» ծրագրի համատեքստում (Հայաստանի, Վրաստանի և Մոլդովայի օրինակով),* Կրթությունը և գիտությունը Արցախում, № 3-4, Երևան, 2017, էջ 129-134:

6. **Հակոբյան Մ.,** *«Արևելյան գործընկերություն» ծրագիրը Հայաստանի, Վրաստանի և Մոլդովայի խորհրդարանական դիսկուրսում,* ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու, № 1.6 (23), Երևան, 2017, էջ 399-412:

7. **Հակոբյան Մ.,** *Հայաստան-Եվրոպական Միություն վերածնված հարաբերությունները և հետագա զարգացման օրակարգը,* Ֆինանսներ և էկոնոմիկա, № 1-2 (209-210), Երևան, 2018, էջ 175-178:

8. **Հակոբյան Մ.,** *Եվրոպական Միության հետ Հայաստանի, Վրաստանի և Մոլդովայի հարաբերությունների ներկա փուլը (2013-2017 թթ.),* Տարածաշրջան և աշխարհ, № 2, Երևան, 2018, էջ 19-26:

Акопян Мгер Каренович

СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ ФУНКЦИОНИРОВАНИЯ «ВОСТОЧНОГО ПАРТНЕРСТВА» В АРМЕНИИ, ГРУЗИИ И МОЛДОВЫ

Диссертация на соискание ученой степени кандитата политических наук
по специальности 23.00.02 - “Политические институты и процессы, международные отношения”

Защита диссертации состоится 11-ого июля 2018 г. в 15:00 на заседании специализированного совета ВАК РА 056 «Полититология» по присуждению ученых степеней при Национальном исследовательском университете обороны МО РА, действующем по адресу: ул. К. Улнеци 56/6, Ереван 0037, РА

РЕЗЮМЕ

Целью настоящего исследования является выявление детерминантов установления программы Европейского Союза (ЕС) «Восточное партнерство» (ВП), результаты ее реализации в Армении, Грузии и Молдове и сравнение парламентского дискурса о ВП в трех рассматриваемых странах. В исследовании предлагается, что через ВП ЕС попытался европеизировать Армению, Грузию и Молдову на основе силового подхода, чтобы гарантировать собственную внешнюю безопасность и продвигать европейскую систему ценностей. Исследование показывает, что основными препятствиями для функционирования ВП являются российское геополитическое сопротивление и недостаточное участие ЕС в урегулировании региональных конфликтов, а в случаях Грузии и Молдовы также в настоящем отсутствие возможности членства в ЕС. Контентный анализ двусторонних рамочных документов, подписанных между ЕС и рассматриваемыми странами, показывает, что их основные различия связаны с экономикой и торговлей, а объем сотрудничества в других сферах в основном аналогичен.

Первая глава диссертации - **«Европеизация как основа политики соседства ЕС»**. В главе представлен многогранный характер концепции европеизации, которое теоретически обсуждается в свете политики соседства ЕС. Показано, что ЕС использует европеизацию как концептуальную основу для продвижения политических трансформаций в третьих странах на основе вертикальных отношений. В главе также определяются инструменты, уровни и детерминанты европеизации.

Вторая глава озаглавлена **«Детерминанты функционирования «Восточного партнерства» в Армении, Грузии и Молдове и текущие результаты»**. В главе обсуждаются основы включения трех стран в Европейскую политику соседства (ЕПС), а также сферы сотрудничества в соответствии с двусторонними планами действий ЕПС. Исследование показывает, что до 2008 года ЕС применял аналогичную политику в отношении Армении, Грузии и Молдовы, пытаясь продвигать политические трансформации. Однако никаких серьезных политических изменений в этих странах не произошло. Впоследствии подробно представляется развития политических и торговых отношений между ЕС и тремя странами, двусторонние рамочные соглашения, их общность и различия, а также два этапа пересмотра ЕПС в 2011 и 2015 годах.

Третья глава озаглавлена **«Парламентский дискурс «Восточного партнерства» и перспективы развития»**. В главе представлен аналитический обзор глубинных интервью, проведенных с членами парламентов в Армении, Грузии и Молдовы,

чтобы раскрыть их позицию относительно места ЕС в их внешней политике и геополитический контекст отношений с ЕС. Впоследствии в главе обсуждаются парламентские взгляды о будущей развитии отношений с ЕС и возможное влияние внутренних изменений на внешнеполитическую повестку дня трех стран.

Основные выводы исследования заключаются в следующем:

1. Основная цель ЕС по налаживанию партнерских отношений с соседними странами заключается в обеспечении собственной внешней безопасности, а продвижение европейских ценностей и экономическое сотрудничество в основном служат главной цели. Это подтверждается недостаточной дифференциацией между странами-партнерами со стороны ЕС. Таким образом, стремление ЕС к «более амбициозному партнерству» было частично уменьшено.

2. В Соглашении о всеобъемлющем и расширенном партнерстве между ЕС и Арменией (СВРП) и Соглашениях об ассоциации (СА) ЕС-Грузия и ЕС-Молдова были определены аналогичные области сотрудничества, а именно политический диалог и безопасность, справедливость, экономика и торговля, отраслевое сотрудничество и т.д. Основным отличием этих документов является глубина предполагаемых торговых связей. СА с Грузией и Молдовой включают в себя Глубокие и всеобъемлющие соглашения о свободной торговле (ГВССТ), которые позволяют свободно перемещать товары, капитал и услуги, в то время как СВРП ЕС-Армения не включает ГВССТ из-за членства Армении в Евразийском экономическом союзе. Реализация этих документов будет в значительной степени зависеть от свободного передвижения людей, которое уже в силе с Грузией и Молдовой, а соответствующие переговоры даже не начались с Арменией.

3. В рамках СВРП как Армения, так и ЕС достигли значительной политической выгоды. Впервые ЕС применил пересмотр ЕПС 2015 года и показал, что партнерство с соседними странами является гибким и адаптированным. В то же время Армения смогла сохранить относительный баланс между ЕС и Россией, избегая возможного геополитического столкновения.

4. СА с Грузией и Молдовой служат прочной основой для будущего сотрудничества с ЕС. В долгосрочной перспективе это сотрудничество может привести к членству ЕС, которое не должно быть исключено из повестки дня, поскольку оно станет новым стимулом для Грузии и Молдовы оставаться приверженными евроцентричной внешней политике.

5. В парламентском дискурсе Армении, Грузии и Молдовы сотрудничество с ЕС в целом воспринимается как стимул для развития. Однако, если в Грузии европейская интеграция рассматривается как однозначный путь для страны, в Армении и Молдове она пользуется значительной, но более низкой поддержкой. С геополитической точки зрения сотрудничество с ЕС во многом зависит от связей с Россией. В парламентском дискурсе Грузии демонстрируется поддержка односторонней региональней политики направленной в ЕС, в то время как в Армении и Молдове сохранение баланса между ЕС и Россией имеет гораздо большее значение. В исследовании делается вывод о том, что даже возможные сдвиги власти в Армении и Грузии не приведут к крупному внешнеполитическому повороту, в то время как парламентские выборы 2018 года в Молдове могут в значительной степени повлиять на внешнюю политику страны, склоняющую ее к России.

Mher Karen Hakobyan

COMPARATIVE ANALYSIS OF FUNCTIONING OF THE "EASTERN PARTNERSHIP" IN ARMENIA, GEORGIA AND MOLDOVA

Dissertation under cipher 23.00.02 - "Political institutions and processes, international relations" aspiring to earn PhD in Political Science

The public defense of the dissertation will take place on 11 July 2018, at 15:00 in the National Defense Research University, MoD RA at the 056 HAC Specialization Chamber session (56/6 K. Ulnetsi str., Yerevan 0037, Republic of Armenia)

. SUMMARY

The aim of the current study is to reveal the determinants of the establishment of the European Union's (EU) "Eastern Partnership" (EaP) programme, its implementation results in Armenia, Georgia and Moldova and compare the parliamentary discourse of the EaP in the three countries under consideration. The study proposes that through the EaP the EU has attempted to Europeanise Armenia, Georgia and Moldova based on a power-based approach in order to guarantee its external security and promote the European value system. The content analysis of the bilateral framework documents signed between the EU and the countries under consideration shows that their primary differences are related to economy and trade while the scope of cooperation in other spheres is largely similar.

The first chapter of the dissertation is titled **"Europeanisation as a basis for the EU's neighbourhood policy"**. The chapter presents the multifaceted nature of the concept of Europeanisation and theoretically discusses it in the light of the EU's neighbourhood policy. It is shown that the EU employs Europeanisation as a conceptual framework in order to promote political transformation in third countries based on vertical relations. The chapter also defines the tools, levels and determinants of Europeanisation.

The second chapter is titled **"The determinants of the functioning of Eastern Partnership in Armenia, Georgia and Moldova and current results"**. The chapter discusses the bases for the three countries' inclusion into the European Neighbourhood Policy (ENP), as well as the scope of cooperation according to the bilateral ENP Action Plans. The study shows that until 2008 the EU has applied a similar policy towards Armenia, Georgia and Moldova trying to promote political transformation. However, no major political changes occurred in any of the countries. Afterwards, the development of political and trade relations between the EU and the three countries, the bilateral framework agreements, their commonalities and differences, as well as the two ENP reviews in 2011 and 2015 is presented.

The third chapter is titled **"The parliamentary discourse of the Eastern Partnership and the development perspectives"**. The chapter presents an analytical overview of the in-depth interviews conducted with member of parliaments in Armenia, Georgia and Moldova in order to reveal their position on the EU's place in their foreign policy and the geopolitical context of cooperation with the EU. Afterwards, the chapter discusses the parliamentary views on future development of relations with the EU and the possible impact of domestic changes on the foreign policy agenda of the three countries.

The major conclusions of the study are as follow:

1. The EU's primary aim for building partnership with neighbouring countries is securing its own external security while promotion of European values and economic coopera-

tion mostly serve the primary purpose, which is proved by insufficient differentiation among the partner countries by the EU. Thus, the EU's strive for a "more ambitious partnership" has been partly diminished.

2. The EU-Armenia Comprehensive and Enhanced Partnership Agreement (CEPA) and EU-Georgia and EU-Moldova Association Agreements (AA) set out similar areas of co-operation, namely political dialogue and security, justice, economy and trade, sectoral co-operation, etc. The basic difference of these documents is depth of foreseen trade links. The AAs with Georgia and Moldova include Deep and Comprehensive Free Trade Agreements (DCFTA) which allows free movement of goods, capital and services, while the EU-Armenia CEPA does not include a DCFTA due to Armenia's membership to the Eurasian Economic Union. The implementation of these framework documents will also largely be influenced by the free movement of people, which is already in place with Georgia and Moldova, while relevant negotiations has not even started with Armenia.

3. Through the CEPA both Armenia and the EU achieved major policy gains. For the first time, the EU visibly applied the 2015 ENP review and showed that the partnership-building with neighbouring countries is flexible and tailor-made. In the meantime, Armenia could maintain a relative balance between the EU and Russia avoiding a possible geopolitical clash.

4. The AAs with Georgia and Moldova serve as a strong basis for future cooperation with the EU. In the long term, this cooperation can lead to the EU membership which should not be excluded from the agenda since it will become a new incentive for both Georgia and Moldova to stay committed to the EU-leaned foreign policy.

5. In the parliamentary discourse of Armenia, Georgia and Moldova, the cooperation with the EU is generally perceived as a stimulus for development. However, if in Georgia the European integration is viewed as an unequivocal path for the country, in Armenia and Moldova it enjoys large yet lower support. From the geopolitical perspective, the cooperation with the EU is largely influenced by the ties with Russia. The parliamentary discourse in Georgia shows considerable support to unilateral foreign policy restricted to the EU, while in Armenia and Moldova balancing relations between the EU and Russia is of much higher significance. The study concludes that in Armenia and Georgia even possible power shifts will not lead to major foreign policy turn, while the 2018 parliamentary elections in Moldova may largely influence the country's foreign policy leaning it towards Russia.